ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 79-Ն «29» հոկտեմբերի 2021

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի N 54-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հուլիսի 20-ի «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2021-2022 և 2022-2023 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» N 54-Ն հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 1-ին կետում «մայիսի 27-ին» բառերը փոխարինել «հունիսի 3-ին» բառերով, իսկ «մայիսի 30-ին» բառերը փոխարինել «հունիսի 6-ին» բառերով,

2) 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերում «31-ը» թիվը փոխարինել «նոյեմբերի 7-ը» բառերով,

3) 13-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Տեսողության, լսողության, հենաշարժողական համակարգի խանգարումներ, մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների 10-12-րդ դասարաններում ուսուցումն իրականացվում է «Հանրակրթական

հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2021-2022 և 2022-2023 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլաններով:»,

4) 20-րդ կետում «12-րդ կետով» բառերը փոխարինել «22-րդ կետով» բառերով:

5) 34-րդ կետում «լսողության» բառից հետո լրացնել «, հենաշարժողական համակարգի» բառերը,

6) 43-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«43. 6-րդ դասարանում «Կերպարվեստ» ուսումնական առարկան դասավանդվում է առաջին, իսկ «Երաժշտություն» ուսումնական առարկան՝ երկրորդ կիսամյակում: 7-րդ դասարանում «Երաժշտություն» ուսումնական առարկան դասավանդվում է առաջին, իսկ «Կերպարվեստ» ուսումնական առարկան՝ երկրորդ կիսամյակում»,

7) Աղյուսակ 16-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Նախարար՝ **Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ**

10/29/2021

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2021 թվականի հոկտեմբերի 29-ի N 79 -Ն հրամանի

Աղյուսակ 16

Տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող միջին, ծանր և խորը մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների անհատական ուսուցման ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Լեզու և ընթերցանություն	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3
Մաթեմատիկա	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2
Ես և շրջակա աշխարհը	1	2	2	2	1	1	1	1	1	1	1	1
Տեխնոլոգիա (Ձեռքի աշխատանք)	1	2	2	2	1	2	2	2	2	2	2	2
Բնագիտություն	-	-	-	-	1	1	1	1	1	1	1	1
Հայրենագիտություն	-	-	-	-	1	1	2	2	2	2	2	2
Ընդամենը	7	9	9	9	9	10	11	11	11	11	11	11